ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2021 թվականի N 98– Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2021 թվականի հունվարի 14-ի N 6-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի մարտի 29-ին կայացած նիստի N 14 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունում զոհված Ժորա Երվանդի Փարսյանի և Վանիկ Աշոտի Անտոնյանի հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով փոխանցել՝ 40 /քառասուն/ հազար դրամ <<Եդեմ 1>> ՍՊԸ-ին և 120 /մեկ հարյուր քսան/ հազար դրամ <<Հայկ Սարդարյան>> ԱՁ-ին:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

X

2021թ. մարտի 30
ք.Իջևան